բան հանելու է, ու գլուխը գոցելու համար ամենևին գիշերնոց կամ գտակ պէտք չէ դնել, վասն զի անով գլուխը սաստիկ կը տաքնայ և ուղեղը կ'այլայլի։ Ընկողնի մէջ պառկելու ատեն կը-նայ մարդ իրեն յարմար եկած դիրքը առնել. բայց նայելու է որ միշտ գլուխը ոտուընեներէն բարձր ըլլայ։

Նարտար գաղղիացի բժշկին մէկը կ'ըսէ թէ գիշերը բնական կերպով հանգիստ քուն ըլլալու համար հարկաւոր է մարմնոյ ու մտաց չափաւոր շարժմունքը մը, որտի հանդարտութիւն, լուութիւն, մթութիւն, չափաւոր տաքութիւն, գաղջ ջրով լուացուիլ, դիւրամարս չափաւոր կերակուր, և մանաւանդ թեթև ըմպելիք։ Շատ զգուշանալու է քուն բերող դեղերը առնելէն. ուրիշ բան է երբոր բժիշկը ապսպրէ։

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՅԱԽՕՍ ԱՌԱԾՔ

Ճրագը իր տակը լոյս (ՐՅՈ) չիտալ։
Մածունայ թան չի, ամէն մարդու բան չի։
Մաշակարի մաշիկը ծակ կը լինի։
Մարդ մարդի ելքի (ՈՅԳԷ) կտայ, մարդ մարդի պըտուղ չիտալ։
Մարդ մարդի տարտը չգիտէ, կէս գիշերին ժամ կը կանչի։
Մարդիս աչքը դուս գայ լաւն այ, քան թէ անունը։
Մեղը ծախողը մատը կը լեզի։
Մի ձեռքը ծափ չիտալ։
Մի ձեռքով երկու ձմերուկ չի բռնըվիլ։
Մուկը ծակը չէր մտնում, ցախաւելը պոչիցը կապեցին։
Մօտիկ հարևանը լաւ այ, քան հեռու բարեկամը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿ

25 ԴԱՐ ՆԱԽ ՔԱՆ ՔՐԻՍՏՈՍ

ՀԱՅԿ

Այն ամենուն որոնք այս մեծահռչակ և մեծագործ անձին անունը իրենց ազգային անուն ունին, պէտք է ծանօթ ըլլայ անոր կեանքն ալ, ինչպէս Ադամայ և Նոյի կեանքը։ Հայկ սեփական հայը Հայոց, որդի Թորգոմայ, հսկայից մէջ մեծցաւ, և անոնց մէջ ալ երևելի եղաւ. աշխարհքիս առաջին բռնաւորէն, Նեբրովթէն ազատեց զերկիր, և իր հօրը վիճակովը գոհ եղած՝ աւելի ընտրեց իր յաղթութեամբն ալ կրկին նոյնը ստանալ և հին յիշատակաց մէջ կենալ, քան յաղթուածին տեղը յափշտակել։ Առաջին յաղթող աշխարհի, իր հօրը նման՝ դիւցազնութենէն վեր դրաւ աշխարհաշինութիւնը և հայրութիւնը. եղբայրներուն և որդւոցը պաշտպան և հոգաբարձու եղաւ ինչուան մահը. ամենուն ալ իր խօսած լեզուն խօսիլ կու տար։ — Հայաստան աշխարհին մէջ Նոյայ յիշատակարաններէն ետև՝ իր յիշատակարաններն են ամենէն հին. Հայք տանը, Հայկաշէնը, Հարք գաւառը, Հայոց ձորը, Դերեզմանք ըսուած տեղը ուր որ Նեբրովթ ընկաւ, և Ատուածաշէն բերդը որ աւելի առաջ չինեց։ Շինութենէ զատ՝ Հայկ կարգաւորեց իր ազգին տօմարն, որուն հետ անշուշտ կապուած էր տօնից և յիշատակաց և երկրագործութեան փոփոխմունքներն ալ։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆՔ

ՀԷՖԷՍՓԻՈՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ։

Մ'ԸՐԻՍԸՆ անգղիացի Ճանապարհորդը, Համատան կամ հին Նկբատան քաղքին մէջ, որ Մարաց թագաւորութեան մայրաքաղաքն էր, մօտերս Մեծին Ալեքսանդրի մատրիմ Հեփեստիոնի գերեզմանը գտաւ, որ Քրիստոսէ 324 տարի առաջ մեռած է։ Գերեզմանին վրայ արձանագրութիւն մըն ալ կայ, որով յիշատակարանին ստուգութեանը ամէն տարակոյսը կը վերնայ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Աչի ունի քան զառիւծու
Կնչիթն է սուր քան զաղուեսու.
Խաւարասէր որպէս ըղջուս
Եւ ձայն ածէ զերդ ըղհաւս։

ՅՈՒԼԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԻՐ ՁԱՓ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ